ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 4 օգոստոսի 2006թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի I-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Հ. Դանիելյանի

Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի

Ռ. Պապայանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Հենրիկ Դանիելյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Հենրիկ Դանիելյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու օրենքով նախատեսված ժամկետը եւ մուծվել է պետական տուրքը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69 հոդվածի 6 կետով, Սահմանադրական դատարանի I-ին կազմը

ՈՐՈՇԵՑ

Հ. Դանիելյանի դիմումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

Նախագահող՝ Հ. Դանիելյան

Անդամներ՝ Վ. Հովհաննիսյան

Ռ. Պապայան